Հետազոտական աշխատանք

Կազմակերպության տվյալներ • Անվանում, հասցե • Տնօրեն • Էլ.հասցե • Հեռախոս	«Մասնակցային դպրոց» կրթական հիմնադրամ Վահրամ Սողոմոնյան masnakcayindproc@gmail.com +37493581908
Հետազոտության թեմա/վերնագիր • Հետազոտության թեմա	ՏՀՏ գործիքների կիրառումը որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու միջոց անգլերենի դասաժամերին:
Ուսուցչի տվյալներ • Անուն, ազգանուն, հայրանուն • Մասնագիտություն • Հեռախոս • Էլ. հասցե • Դասավանդվող առարկաներ • Դասարաններ	Երիցյան Գայանե Ալբերտի ուսուցիչ 094002692 gayaneyeritsyan7@gmail.com անգլերեն 3-9-րդ դասարաններ
Ուսումնական հաստատության տվյալներ • Անվանումը, հասցե • Հեռախոս • Էլ. հասցե (տնօրենության) • Web կայքի հասցե	Վանաձորի Պ.Տիչինայի անվան թիվ 20 հիմնական դպրոց • 4-00-74 • vanadzor20@schools.am vanadzor20.schoolsite.am

Բովանդակություն

Ներածություն **3**
Հիմնական բովանդակություն **4**
Եզրակացություններ, առաջարկություններ **5**
Օգտագործված գրականության ցանկ **6**
Հավելվածներ **7**

Ներածություն

Նպատակը եւ հետազոտական հարցը	Հիմնահարց-Հնարավոր է արդյոք բարձրացնել սովորելու մոտիվացիան 5-րդ դասարանում Kahoot գործիքի կիրառմամբ: Ժամանակակից կրթական գործունեության ընթացքում դասավանդման մեջ ավելի շատ են օգտագործվում տեղեկատվական տեխնոլոգիաները: Տեխնոլոգիաների օգտագործումը սովորողների մոտ առաջացնում է հետաքրքրասիրություն դասավանդվող առարկայի և տվյալ դասի նկատմամբ և առավել հաջողված է դարձնում ուսուցման գործընթացը: Բացի այդ տեղեկատվական տեխնոլոգիաները հնարավորություն են տալիս աշակերտներին ցուցաբերել բարձր ակտիվություն կրթական գործունեության մեջ և ապահովում են բոլոր սովորողների ներգրավվածությունը դասապրոցեսում: Հետազոտության հիմնական նպատակն էր ուսումնասիրել և կիրառել այն տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնց միջոցով հնարավոր է բարձրացնել սովորողների մոտիվացիան՝ հատկապես 5-րդ դասարանում, երբ աշակերտները սկսում են ուսումնառությունը միջին օղակում: Հետազոտության նպատակներից էր նաև ուսումնասիրել, թե որքանով է նպաստում տեխնոլոգիաների կիրառումը սովորողների ինքնուրույնության, տրամաբանության և հիշողության զարգացմանը:
Ո՞ր առանցքային կոմպետենցիային/կարողունակությանն է ուղղված նպատակի ուսումնասիրությունը	Լեզվական գրագիտություն և կարողունակություն Թվային և մեդիա գրագիտություն Սովորել սովորելու կարողունակություն

Հետազոտության թիրախային խումբը և շրջանակը /քանակ, սեռային բաշխում/	Հետազոտության աշխատանքի համար ընտրվել է 5-րդ դասարանը, որտեղ սովորում է 30 աշակերտ, որից աղջիկ, տղա:
Օգտագործված հետազոտական մեթոդները, գործիքները (օրինակ՝ քանական հետազոտություն՝ հարցաթերթիկի միջոցով, որակական հետազոտություն՝ խորին հարցազրույցի միջոցով եւ այլն)	Հետազոտության ընթացքում կիրառվել է դիտարկման մեթոդը, որի ընթացքում շեշտը դրվել է մոտիվացիայի վրա:
Հետազոտության իրականացման ժամանակահատվածը	10.09.2023-20.09.2023

Հիմնական բովանդակություն

Գրականության ակնարկ ● Մեջբերումներ արդեն արված հետազոտություններից, ● Մեջբերումներ գրականությունից, տեղեկության վստահելի աղբյուրներից: **<u>Պարտադիր է կատարել հղում աղբյուրին</u>**	**Ինչ է մոտիվացիան** Մոտիվացիան առաջացել է լատիներեն movere բառից: Տերմինն առաջին անգամ օգտագործել է Ա. Շոպենհաուերը իր «Բավարար պատճառի չորս սկզբունքներ» հոդվածում: Մոտիվացիայի վերաբերյալ բազմաթիվ սահմանումների ենք հանդիպում, օրինակ՝ մոտիվացիան մարդու կողմից այս կամ այն վարքագծի գիտակցված ընտրության գործընթացն է : Մոտիվացիան համարվում է նաև փաստերի համախումբ, որն օգտագործվում է՝ որպես նպատակներին հասնելու խթանող գործիքներ: Մոտիվացիան այն է, ինչը մեզ ստիպում է սկսել, սովորությունն այն է, ինչը մեզ ստիպում է առաջ գնալ: **Ջիմ Ռոն** Մոտիվացիայի ողջ գաղափարը ծուղակ է: Պարզապես արեքդա…և հետո, գուշակեք, թե ինչ: Այն բանից հետո, երբ մենք սկսում ենք ան լ այն, մոտիվացիան պարզապես գալիս է և մեզ համար հեշտացնում է դա անելը: **Ջոն Քմաքսվել** Սովորողին կարելի է դրդել վախով և պարգևներով, բայց այս երկու մեթոդները միայն ժամանակավոր են: Միակ մնայուն մեթոդը ինքնամոտիվացիան է: **Հոմեր Ռայս** Մենք կարող ենք փոփոխել գործունեության տեսակը և կարող ենք նաև փոփոխել դինամիկան, որում տեղի է ունենում այդ գործունեությունը: Դինամիկա ասելով ես նկատի ունեմ, որ երբեմն մարդիկ կարող են աշխատել միայնակ, ինչպես նաև զույգերով կամ խմբերով: **Ադամ Սիմփսոն**

Հետազոտության ընթացքը	Լեզու սովորելու ընթացքում բազմաթիվ սովորողների համար մոտիվացիան ինքնաբերաբար չի առաջանում, փոխարենը այն խամրում է և անհետանում: Դրա համար սովորելու նկատմամաբ մոտիվացիան պետք է խնամքով պահպանվի, որը շատ հաճախ դժվար է լինում ժամանակակակից աշխարհում՝ հատկապես 21-րդ դարի սովորողի հետ: Դասավանդման մարտահրավերներից մեկը ինքնամոտիվացիայի բացահայտումն, խրախուսումն ու առավելությունն է: Երկրորդ (և գուցե ավելի մեծ) մարտահրավերը այն սովորողների հետ գործ ունենալն է, ովքեր կարծես թե չունեն լեզուներ սովորելու ուժեղ մոտիվացիա, որի դեպքում անհրաժեշտ են մոտիվացիայի այլ ձևեր: Մոտիվացիան կարևոր դեր է խաղում բոլոր մարդկանց վարքագծի և ընտրությունների, ինչպես նաև կրթության և ուսման մեջ: Առանձնացվում է մոտիվացիայի երկու տեսակ. ● Ներքին մոտիվացիա- երբ սովորողն ունի ներքին դրդապատճառներ, ● Արտաքին մոտիվացիա-երբ սովորողի մոտիվացիան ներքին դրապատճառներից դուրս է: Մոտիվացիան և սովորողների ներգրավվածությունը փոխկապակցված են և այն սովորողը, ով ներառված է սովորելու մեջ ավելի է մոտիվացվում: Հաշվի առնելով այսօրվա դասարանների ծանրաբեռնվածությունը ուսուցիչներից մեծ ջանք ու ստեղծագործական աշխատանք է պահանջում հետաքրքրություն առաջացնել տարբեր կարողություններ ունեցող սովորողների մոտ:

Կրթական համակարգի արդիականացումը բացում է նոր հորիզոններ և հնարավորություններ, բայց միևնույն ժամանակ ավելացնում է ուսուցչի մասնագիտական իրավասության պահանջները: Համակողմանիորեն զարգացած և ժամանակակից տեղեկատվական հասարակության մեջ կյանքին և փոխգործակցությանը պատրաստ աշակերտ կրթելու խնդիրը կարող է լուծել միայն ժամանակակից մանկավարժական և տեղեկատվական տեխնոլոգիաների տիրապետող ուսուցիչը: Ուսուցչի մասնագիտական իրավասության կարևորագույն բաղադրիչներից է նրա պատրաստակամության աստիճանը՝ կիրառելու ժամանակակից տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները (ՏՀՏ) իր մասնագիտական և մանկավարժական գործունեության մեջ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը <Անգլերեն> առարկայի դասապրոցեսում՝ որպես սովորողի մոտիվացիան բարձրացնելու միջոց

Ուսումնական մոտիվացիան սերտորեն կապված է սովորողի անձնային առանձնահատկությունների, հետաքրքրությունների, ընդունակությունների հետ: Սովորողներին սկզբնական շրջանում հետաքրքիր է, ոչ թե գիտելիքը, այլ նոր հարաբերությունները և ուսումնական գործունեության բնույթը, հետագայում արդեն առաջանում է հետաքրքրություն և աստիճանաբար ձեռք է բերում ճանաչողական բնույթ: Շատ կարևոր է տարբեր իրավիճակներում պահպանել մոտիվացիայի շարունակությունը: Հետևաբար, մեզ անհրաժեշտ են ավելի հետաքրքիր մեթոդներ, միջոցներ, մոտեցումներ, իվերջո այնամենը, ինչը

	կօգնի աշկերտներին մոտիվացված պահել, որն էլ կնպաստի ավելի խորը գիտելիքներ ստանալ աշխարհի մասին, արդյունքն էլ կլինի գրագետ, զարգացած երիտասարդությանը: Մոտիվացիան ամենուր է .այն աշխատանքի նկատմամբ հետաքրքրությունն ու ցանկությունն է, որի վրա ազդում են ինչպես արտաքին,այնպես էլ ներքին գործոնները: Ժամանակակից տեխնոլոգիաների զարգացումը ևս մեկ տարբերակ է անհատների մի մեծ բանակի մոտիվացված պահելու: Կրթական գործընթացի շրջանակներում կարևոր տեղ է գրավում սովորելու մոտիվացիան: Մոտիվացիայի նպատակը երեխաների մոտ առարկայի նկատմամբ կայուն հետաքրքրության ձևավորումն է, հաղորդակցական և ստեղծագործական կարողությունների զարգացումը: Ժամանակակից տեխնոլոգիաներն այսօր կիրառվում են մարդկային գործունեության բոլոր ոլորտներում: Գիտելիքների ցանկացած բնագավառում մասնագետի վերապատրաստումը ներառում է օգտագործողների առնվազն պարտադիր ուսուցում, համակարգչային գրագիտությունը դառնում է կրթված մարդու ժամանակակից ըմբռնման բաղադրիչներից մեկը: Այդ իսկ պատճառով այսօր անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել անգլերենի դասավանդման ժամանակ տեղեկատվական տեխնոլոգիաների նոր գործիքների կիրառմանը: Այսօր ամբողջ աշխարհում ուսուցիչներն ավելի ու ավելի են գիտակցում կրթության մեջ ժամանակակից ՏՀՏ-ների հմուտ օգտագործման առավելությունները: ՏՀՏ-ն օգնում է լուծել հետևյալ խնդիրները՝

- կրթական գործընթացների բարելավում,
- կրթական արդյունքների և մոտիվացիայի բարձրացում,
- ցանցերի ստեղծում և համատեղ նախագծերի իրականացում,
- կրթական գործընթացի կազմակերպման և կառավարման բարելավում:

Սա զարմանալի չէ, քանի որ այն հնարավորությունները, որոնք ՏՀՏ-ն ընձեռում է նորարարական տնտեսության և ժամանակակից հասարակության զարգացման համար, հասանելի են դարձել կրթության համար: Ուսուցիչների առջեւ խնդիր է դրված աշակերտի ուսումնական գործունեությունն այնպես կազմակերպել, որ ուսուցման համար առավելագույն մոտիվացիա ապահովեն: Կոլեկտիվ առաջադրանքներ կատարելիս աշակերտները կենտրոնանում են ոչ թե արտահայտության ձևի, այլ բովանդակության վրա: Ինչպես գիտենք օտար լեզվի դասավանդման հիմնական նպատակը հաղորդակցական կարողությունների ձևավորումն ու զարգացումն է, այսինքն՝ իրական լեզվական միջավայրում օտարալեզու և միջմշակութային հաղորդակցություն իրականացնելու կարողությունը:

Այսօր երբեմն շատ դժվար է լինում ընտրել համապատասխան ՏՀՏ գործիքներ, որոնք իսկապես նպաստում են սովորողների մոտ մոտիվացիայի խթանմանը: Իմ դասերի ընթացքում պարբերաբար օգտագործելով մի շարք գործիքներ կարող եմ փաստել, որ շատ կարևոր է ճիշտ ընտրություն կատարել և նախապես պլանավորել նրա կիրառումը հստակ ունենալով համապատասխան նպատակ: Այս հետազոտման համար

	առանձնացրել եմ երկու ՏՀՏ գործիք, որոնք առավել նպաստում են դասապրոցեսի ժամանակ սովորողների մոտիվացիայի խթանմանը: Այդ գործիքներն են **Kahoot** և **LearningApps** ուսումնական պլատֆորմները, որոնք օգտագործվում են որպես ուսումնական տեխնոլոգիա դպրոցներում և այլ տարբեր ուսումնական հաստատություններում: **Kahoot գործիքի կիրառման արդյունավետությունը** Kahoot-ը հիմնադրվել է Նորվեգիայում 2013 թ և օգտագործվում է սովորողի գիտելիքների վերանայման և ձևավորող գնահատման համար, այն նաև համարվում է թարմացնող վարժանք: Այս գործիքը հնարավորություն է տալիս սովորողներին աշխատել խմբով կամ զույգերով, որոնք հավաքվում են ընդհանուր էկրանի շուրջ: Այս գործիքի հետազոտությունն անց եմ կացրել 5-րդ դասարանում, որտեղ սովորում են 33 աշակերտ, որոնց անհրաժեշտ են մշտական և շարունակական հետաքրքիր նյութեր անգլերեն առարկան ավելի գրավիչ դարձնելու համար: Երբ առաջին անգամ պիտի կիրառեի Kahoot գործիքը հերթական թեման ամփոփելու նպատակով կար մտավախություն, որ սովորողները կունենան որոշ տեխնիկական խնդիրներ, որոնք կխաթարեն դասապրոցեսի սահուն ընթացքը: Սակայն նախնական հստակ պլանավորումն ու նախապատրաստական աշխատանքները նպաստեցին, որ խնդիրներ չառաջանան և գործիքի կիրառումն իսկապես հաջողված էր: Դասն անց է կացվել համակարգչային դասասենյակում, որտեղ կար նաև համացանցային հասանելիություն, մասնակցել են բոլոր սովորողներն իրենց բջջային հեռախոսներով: Դասարանի բոլոր

	աշակերտները խանդավառված էին և հետաքրքրությամբ մասնակցեցին դասապրոցեսին: Իհարկե կային որոշ աշակերտներ ովքեր ունեցան խնդիրներ համացանցին միանալու հետ կապված, սակայն հնարավոր եղավ լուծել այն: Առաջին դասաժամի նպատակն էր առաջ քաշել՝արձանագրել ուսումնասիրվող դասարանում աշակերտների հետաքրքրվածության և մոտիվացիայի աստիճանը անգլերեն առարկայով և դասի ժամանակ ներկայացվող նյութով՝ կիրառելով Kahoot գործիքը: Հաջորդ դասերի ընթացքում սովորողներն ավելի հմտորեն կիրառեցին գործիքը, խնդիրներ գրեթե չնկատվեցին, մասնակցելու և սովորելու մոտիվացիան ավելի էր բարձրացել:

Եզրակացություններ, առաջարկություններ

Վերհանված արդյունքներ, եզրակացություններ, պատասխան հետազոտական հարցին	Այսպիսով ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը հնարավորություն է տալիս դասը դարձնել ավելի հետաքրքիր, վառ, ավելի հիշվող, ինչը թույլ է տալիս հուսալ, որ դասը առանց հետքի չի անցնի յուրաքանչյուր սովորողի համար: ՏՀՏ գործիքների կիրառումը արդարացված է, քանի որ այն թույլ է տալիս ակտիվացնել աշակերտների գործունեությունը, հնարավորություն է տալիս բարելավել երեխաների կրթության որակը, բարելավել ուսուցչի մասնագիտական մակարդակը: Սակայն յուրաքանչյուր գործիք կիրառելուց առաջ ուսուցիչը պետք է մանրամասն պլանավորի և նախապես պատրաստական աշխատանքներ տանի: Քանի որ այս հետազոտման ընթացքում առաջադրանքները կազմված էին ուսումնական նյութին համապատասխան սովորողներն ավելի մոտիվացված էին նյութը յուրացնելու և սովորելու համար: Ուզում եմ նշել նաև, որ դասարանում ստեղծվեց ընդհանուր համագործակցային մթնոլորտ, երբ բոլորն օգնում են իրար և փորձում լուծում գտնել առաջացած խնդիրները հնարավորինս արագ վերացնելու համար: Նաև նշեմ, որ ինքս ավելի մոտիվացված եմ աշխատել, ստեղծել համապատասխան նյութը և փորձել առավել մեծ հետաքրքրություն առաջացնել առարկայի հանդեպ:
Այլ տեղեկատվություն	

Օգտագործված գրականության ցանկ

1. Զայցեվա Մ.Վ.-Մոտիվացիա և դրա բարձրացման որոշ եղանակներ: - 1998թ:
2. Վասիլևա Մ.Մ. Օտար լեզու սովորելու մոտիվացիայի ձևավորման պայմանները: - 1998թ: –Մ. Մանկավարժություն 1998.
3. Թոփուզյան Ա. Օ., Գյուլամիրյան Ջ.Հ., Պողոսյան Լ.Մ, Ասատրյան Ս.Մ., Անտոնյան Լ.Ա., Ղազարյան Մ.Զ., Տեղեկատվական տեխնոլոգիաները դպրոցում, ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2018:
4. https://study.com/learn/lesson/motivation-education-theory-impact.html-15.09.2023

5. **https://hy.wikipedia.org/wiki/Kahoot! 18.09.2023**

Հավելվածներ

Հաշվետվության կցված նյութեր

- Հետազոտության գործիքներ (հարցաթերթիկներ կամ այլ)
- Նկարներ
- Արդյունքներ






Scoreboard
Gevorg Poghosy 4,636
Vaxarshak 4,616
Narek 4,565
yana alex 4,535
Hayk 4,403
Tough round! 6 players lost their Answer Streak of 5!
kahoot.it Game PIN: 2372894


Join at www.kahoot.it
or with the Kahoot! app
Game PIN:
237 2894
Start
Kahoot!
Areg
Milena
Sona
yana-alex
Vahagn
Meri
Narek
Seyran
Gevorg Poghosy
Vaxarshak
Elen
Hayk
Sanasar
Gagik
Mane
Zara and Alisa
elen
Qnarik
18